ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ապաստանի տրամադրման վարչության
ապաստանի հայցի քննման բաժնի պետ
Սեդա Հարությունյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2025 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 29-ը ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ապաստանի հայցի քննման բաժնի փորձագետ Նաիրա Պավլիկի Եղիազարյանի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ**

Հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. իրականացրել եմ ապաստան ստանալու դիմումների վարույթ և կայացրել եմ դրանց վերաբերյալ որոշումներ.

2. իրականացրել եմ ապաստան հայցողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավական, սոցիալական և այլ բնույթի օժանդակության տրամադրման աշխատանքներ.

3. Պատասխանել եմ քաղաքացիների և պետական կառույցներից ստացված հարցումներին՝ կապված ՀՀ-ում փախստականի կարգավիճակի և ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ:

4. Բաժնի էլեկտրոնային համակարգով պատրաստել և հաստատման եմ ուղարկել ապաստան հայցող դիմումատուների ծանուցումները, ինչպես նաև նրանց վերաբերյալ հարցումներ եմ ուղարկել համապատասխան պետական կառավարման մարմիններ:

5. Մասնակցել եմ «Հայաստանում միգրացիայի և ապաստանի արդյունավետ կառավարման քաղաքականության շրջանակի և կարողությունների ընդլայնում» ծրագրի շրջանակներում, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված հետևյալ միջոցառումներին.

1) 2025 թվականի հոկտեմբերի 11-ից 12-ը Ծաղկաձորում «Փախստականի կարգավիճակի որոշման հարցազրույցը» թեմայով քննարկմանը,
2) 2025 թվականի հոկտեմբերի 23-ին Երևանի «Կոնգրես» հյուրանոցում՝ ՀՀ ՆԳՆ ՄՔԾ համար ԵՄ միգրացիայի և ապաստանի մասին պակտի վերաբերյալ բրիֆինգին,
3) 2025 թվականի դեկտեմբերի 24-ին ՄԱԿ-ում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի տրամադրման վարչության աշխատակիցների համար «Աշխատանքը ԼԳԲՏԻՔ+ անձանց հետ» աշխատաժողովին:

6. 2025 թվականի դեկտեմբերի 12-ից 14-ն Աղվերանում մասնակցել եմ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից փախստականների իրավունքի հիմնադրույթների վերաբերյալ ապագա իրավաբանների, հետազոտողների և փախստականների իրավունքների ջատագովների համար կազմակերպված «Փախստականների իրավունքի 14-րդ ամենամյա դպրոց» աշխատաժողովին:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ԱՀՔ բաժնի փորձագետ՝ Ն.Պ.Եղիազարյան

« 29 » դեկտեմբերի 2025թ.

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները գնահատում եմ՝ գերազանց

---

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ապաստանի հայցի

քննման բաժնի պետ՝ Ս. Հարությունյան

«29» դեկտեմբերի 2025թ.